## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

● 1 *Մայիս*, Նոր Կիրակի. — *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ժամարարն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան։*

● 7 *Մայիս Շբ. — Երեկոյին «Հրաշափառ» ի Ս. Յարութիւն, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի։*

● 8 *Մայիս* Աշխարհամատրան Կիրակի. — *Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ Ս. Գերեզմանին վրայ. ժամարարն էր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան, որ քարոզեց բնաբան ունենալով «Այսօր է զօր արար Տէր. եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա»։*

● 15 *Մայիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ժամարարն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան։*

● 22 *Մայիս Կիր.* — Տօն Երեւման Ս. Խաչին. *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ժամարարն էր Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեան։*

● 29 *Մայիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր Գողգոթայի մատրան մէջ ժամարարն էր Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեան։*

● 1 *Յունիս Դշ. — Յետ-միջօրէի, Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի գլխաւորութեամբ՝ հոգեւորական միաբան հայրեր և ժող. վարժարանի սաներ Համբարձման լեռ ելան և կատարեցին երեկոյեան պաշտամունքը, «Հսկումն» և առաւօտեան պաշտամունքը և վերադարձան վանք։*

● 2 *Յունիս Եշ.* — Համբարձումն Տեառն. *Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ի գլուխ հոգեւորական միաբան հայրերու, պաշտօնական երթով Համբարձման լեռ բարձրացաւ և «Հրաշափառով» մուտք գործեց Համբարձման Ս. Մատուռը, և մեր վրանին տակ ներկայ գտնուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագին՝ զոր մատոյց Հոգ. Տ. Գասկ Վրդ. Թումայեան։ Ն. Ամենապատուութիւնը նախագահեց Հայրապետական Աթոռին Սրբէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձի մաղթանքին։*

● 4 *Յունիս Շբ. — Երեկոյին, Ս. Պատրիարք Հայրը ի գլուխ հոգեւորական հայրերու, Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին գնաց պաշտօնական երթով և նախագահեց վաղուան նախատօնակին։*

● 5 *Յունիս Կիր.* — Երկրորդ Ծաղկազարդ. *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս, ժամարարն էր Հոգ. Տ. Միւռոն Վրդ. Կրճիկեան։*

● 9 *Յունիս Եշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընկերակցութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեանի, այցելութիւն տուաւ Պաղեստինի Նոր ընդհ. կառավարիչին. — Յետոյ, ներկայ գտնուեցաւ Անգլ. Հիւպատոսարանին մէջ ի պատիւ Անգլիոյ Վեհ. Թագաւորի ծննդեան տարեդարձի պաշտօնական ընդունելութեան։*

● 11 *Յունիս Շբ. — Յետ-միջօրէի, Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին և նախագահեց վաղուան տօնի նախատօնակին։*

● 12 *Յունիս Կիր.* — Հոգեգալուստ. *Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ աւագ սեղանին վրայ, ժամարարն էր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան։*

● 14 *Յունիս Գշ. — Կէսօրէ առաջ, Պաղեստինի ընդհ. կառավարիչի օգնական Ճէմալ Պէյ Թուխան և երկու կայմաքամներ՝ Պաւարշի և Է. Հիւսէնի Պէյեր, այցելութիւն տուին Ս. Պատրիարք Հօր։*

● 19 *Յունիս Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր Գողգոթայի մատրան մէջ, ժամարարն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան. — Յետ-միջօրէի, Ս. Պատրիարք Հայրը ի գլուխ հոգեւորական հայրերու, պաշտօնական երթով Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին գնաց և նախագահեց վաղուան տօնի նախատօնակին։*

● 20 *Յունիս Բշ.* — Տօն Ս. Կուսանացն Հռիփսիմեանց. *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ՝ Ս. Հռիփսիմեանց մատրան մէջ, ժամարարն էր Տ. Յարութիւն Աբեղայ Մուշեան։*

● 22 *Յունիս Դշ. — Կէսօրէ առաջ, Պաղեստինի ընդհ. կառավարիչ՝ Ֆալահ Փաշա, ընկերակցութեամբ ոստիկանապետի և հետեւորդներով, այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր։*

● 24 *Յունիս Ուր. — Յետ-միջօրէի, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին ի Ս. Յակոբ, և նախագահեց վաղուան տօնի նախատօնակին։*

● 25 *Յունիս Շբ.* — Տօն Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ ելանելոյն ի վիրապէն. *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Ստեփանոս՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի սեղանին վրայ, ժամարարն էր Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմհաճեան. — Յետ-միջօրէի, Ս. Պատրիարք Հայրը ներկայ գտնուեցաւ երեկոյեան պաշտամունքին և նախագահեց վաղուան տօնի նախատօնակին։ Զկնի նախատօնակին՝ վարդապետական մասնաւոր իշխանութեան չորս աստիճանները շնորհեց Հոգ. Տ. Յարութիւն Աբեղայ Մուշեանին։*

● 26 *Յունիս Կիր.* — Տօն Կաթուղիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի. *Հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ աւագ խորանին վրայ, ժամարարն էր Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօղարեան, որ և քարոզեց բնաբան ունենալով «Էջմիածինն ի հօրէ և լոյս փառաց ընդ նմա» շարականը. «Հայր մեր»էն առաջ, Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Ս. Էջմիածնի և Հայրապետական մաղթանքի արարողութեանց։*

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem, Armenian Patriarchate, Jerusalem,
Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.